ՌՈՒՍԱՑ ՀԱՅԱՍՏԱՆ

118. Ընդ ձեռամբ Ռուսաց երկու աղգք գաւառաց են Հայոց, կէսք մասն բնիկ Հայոց Մեծաց, և կէսք Աղուանից-Հայոց և յարելոց 'ի նոյնս լեռնակողմանցն Կովկասայ: Առաջինքն 'ի չորս նահանգս զատուցեալ են, Սոմխէթ և Սամշխէ, Հայկական նահանգ կամ Երեւան, Գանձակ, և Գարապաղ. Սոմխէթ-Սամշխէ մասն համարի մեծի կուսակալութեանն Տփխեաց, և Գարապաղ՝ Շէմախեայ կամ Կասպիական կուսակալութեան, որ գրուէ զարտաքին մասն Հայոց, նահանգս վեց, այսինքն են Շաքի, Շիրուան, Թալիշ, Պաքու, Քուսպա և Դարբանտ. յետինքդ թեպէտ և դուն ուրեք անկան ընդ Հայոց իշխանութեամբ, այլ զի յաճախ յիշին 'ի վէպս ազգիս և սահմանակիցք են մերոյ աշխարհիս, և զի ոչ նկարագրեցան 'ի կարգի աշխարհագրութեանս՝ յիշատակին ասա:

Ա. ՍՈՄԽԷԹ կամ ՎՐԱՀԱՅՔ

119. Հիւսիսակողմն Հայոց աշխարհի ընդ ձեռամբ Ռուսաց՝ գրաւեալ է ըստ վարչութեան 'ի մեծի կուսակալութեան Տփխեաց, և երեք գաւառք են 'ի նմա, Ախալցխա հիւսիսոյ արևմտից, Գիւմրի 'ի հարաւոյ, և Պոռչալու 'ի հիւսիսոյ արևելից:

Ա. ԱԽԱԼՑԻԽԱ կամ ԱԽԱՑԻԽԻ գաւառ, որ ՍԱ-ՄՑԻԽ կոչի 'ի Վրաց (այսինքն Երկիր Մծխեաց կամ Մեսխաց) սահմանի 'ի հարաւոյ Օսմանեան գաւառաց Արտահանայ (53) և Զըլտրայ (37) Կարուց, յարևմտից՝ Եգերացոց երկրաւ և Կուր գետով, 'ի հիւսիսոյ և յելից՝ լերամբք որ անջրպետեն ընդ Պոռչալու և ընդ Սոմխէթ գաւառս, և Խրամ (Քցիա) գետով. 45,000 բնակիչք են գաւառին: Բնիկ վիճակ ԱԽԱԼ-ՑԻԽԻ քաղաքի, որ Թարգմանի Նոր Բերդ, յարևմտից հարաւոյ գաւառին կայ, 'ի հին ՕՑԻԽԻ կամ ՈԴՐԱԽԻ նահանգի, որ յարևմտեան հիւսիսային ծայրս աշխարհին Գուգարաց և ամենայն Հայոց. քաղաքն 'ի վերայ համանուան գետոյ օժանդակի Կուրայ կառուցեալ է, 'ի քարափին բարձու 3000', բաժանեալ 'ի հին և 'ի նոր քաղաք և 'ի բերդն, զոր 'ի Թամարայ Թագուհւոյ ասեն շինեալ. նշանաւոր է մզկիթն մեծ 'ի ձև Ս. Սոփիայ Կոստանդնուպօլսոյ շինեալ, զոր յեկեղեցի փոխել կամեցան Ռուսք, տիրեալ քաղաքիս յամին 1828. և ածին այսր գաղթական Հայոց, 'ի Կարսայ և 'ի Կարնոյ, որք և շինեցին զնոր քաղաքն. եկեղեցիք ուրթ են 'ի քաղաքին, յորոց երեք Հայոց արևելեայց և երկու հռովմէական Հայոց. երկուք յեկեղեցեացն հինք են, յորոց մի է յանուն Ս. Յովհաննու 'ի բարձու բերդին, որոյ է պատկերս առաջի եդեալ: Բնակիչք քաղաքին են իբր 13000 ոգիք, որոց երկու մասն Հայ է, և մի մասն Վրացի, Թուրք և Հրեայ և այլազգիք:

120. Յարևմտակողմն Ախալցխայ 'ի կողմանս ԱՊԱՍԹՈՒՄԱՆ վիճակի որ 'ի ձախմէ գետոյն կայ՝ Սմբատ Բիւրատաւեան սպարապետ Արտաշիսի Բ կառոյց զՏԷՄՈՐ բերդ ընդդէմ արշաւանաց հիւսիսայնոց: — Ի հիւսիսոյ Ախալցխայ յաջմէ կամ յելից Կուրայ կայ ԱԶԳՈՐ վիճակ, համանուն ամուր բերդաւանաւ, որ է ԱՍԿՈՒՐԷԹ ըստ նախնեաց, ընդ որով բանակեցաւ երբեմն Աշոտ Երկաթ և եհար զգաւառական գնդունիս. և աստ ուրեմն 'ի հերուն (1853) յարձակեալ Օսմանեանց 'ի վերայ Ռուսաց՝ ընկրկեցան յետս: Ունի հոյակապ եկեղեցի և ուիտա Տիրամոր, զորոյ պատկեր առեն Անդրէի առաքելոյ բերեալ այսր: — Ի հարաւոյ Ազզորայ և յելից Ախալցխեայ, 'ի հիւսիսոյ Ախալքալաքի կան վիճակքն ԱՍԲԻՆԴԱ և ԽԵՐԴՎԻՍ 'ի հին գաւառին ՋԱՒԱԽԱՑ. Խերդվիս աւան՝ ունի ամրոց հզօր և վայելուչ առ Փոռոան գետով: — ԱԽԱԼԽ-ՔԷԼԷՔ վիճակ հարաւային մասն է գաւառին կամ Սամշխեայ, 'ի հին Ջաւախս, յորում են լիճք շատ, և գլխաւոր Փոռոան կամ Թոփոռան 'ի հիւսիսոյ արևելից. ժառանգութիւն էր վիճակս Թորոսի Քարթլոսի եղբօրն Հայկայ, նահապետի Վրաց, և ցարդ բնակեալ է 'ի Վրաց և 'ի յոլովից ևս Հայոց, որք զնոցին զվրաց լեզուն խօսին, որպէս և յամենայն Սամշխէ և 'ի Սոմխէթ. քաղաքն ԱԽԱԼՔԱԼԱՔ որ Թարգմանի Նոր-քաղաք, յեզր Փառաւան գետոյ՝ ունի ամրոցս, և վաճառանոցս յաջոյ առևտրիս: Համօրէն



Եկեղ. Ախալց. — Vieille Eglise (Akhalzikhé).